1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի նիստի N 38 արձանագրության 33-րդ կետով հավանության արժանացած «Զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) N 1 հավելվածի 26-րդ կետի 1-ին ենթակետից վերջին՝ «Ամենամյա ծրագրով հատկացվող ֆինանսական միջոցները նախատեսված են միայն կրթաթոշակի վճարման համար» նախադասությունը հանել.

2) N 2 հավելվածով հաստատված զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրով նախատեսվող և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող միջոցառումների ցանկի 7-րդ և 8-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	7.	Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում	1) 500 գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը 25% է: 2) 2016 թ. 441 շահառուի համար մեկնարկած և 2017 թ. շարունակվող մասնագիտական ուսուցման դասընթացների կազմակերպման վճար:	1) ՀՀ պետական բյուջե՝ 45,037.0 հազար դրամ, միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցներ 2) ՀՀ պետական բյուջե՝ 35,369.0 հազար դրամ

8.	Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում	1) 500 գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման ընթացքում կրթաթոշակի վճարում: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը 25% է: 2) 2016 թ. սկսված և 2017 թ. շարունակվող ծրագրերում ընդգրկված 441 շահառուին վճարվող կրթաթոշակ:	1) ՀՀ պետական բյուջե՝ 41,250.0 հազար դրամ, միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցներ 2) ՀՀ պետական բյուջե՝ 24,834.7 հազար դրամ

».

3) N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի: